11214

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 08 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 0116-22

Ձեռնարկողը՝ ***«ԲԼԵՔ ՍԹՈՈՒՆ ՕԲՍԻ» ՍՊԸ***
Երևան, Ավան 14փ., 2-րդ նրբ.,տուն 13

Գործունեությունը՝ ***Արտենիի օբսիդիանների «Բլեք» տեղամասում երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ, Թալին (Թաթոյ) համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ N 0116-22

<09> 08 2022թ.

Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանների «Բլեք» տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԲԼԵՔ ՍԹՈՈՒՆ ՕԲՍԻ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին (Թաթուլ) համայնք

Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանների «Բլեք» տեղամասի 2.5հա մակերեսով տարածքում օբսիդիանի արդյունաբերական նշանակություն ունեցող պաշարների հայտնաբերման նպատակով նախատեսվում է իրականացնել երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքներ: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

«Բլեք» օբսիդիանի տեղամասը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Երևան-Գյումրի երկաթգծի Արտենի կայարանից 4կմ հյուսիս: Տեղամասը տեղադրված է Արտենի լեռան հարավ-արևմտյան լանջի 1350-1380մ բարձրությունների վրա: Մոտակա բնակավայրերն են Կանչ Արևուտ, Դդմասար, Դաշտադեմ գյուղերը: Օրոգրաֆիական տեսակետից տեղամասի հարակից տարածքը ներկայացնում է անտառազուրկ լեռնային շրջան, բնորոշ բլրային ռելիեֆով և սակավ խոտաբուսական ծածկով: Բարձրությունները ամբողջապես ներկայացված են հրաբխային տուֆերով և տարակազմ լավաներով, հաճախ են հանդիպում նաև հրաբխային խարամային կոներ: Շրջանում տիրապետող բարձրությունն է Արտենի լեռը (2047մ): Ուսումնասիրվող շրջանը գտնվում է Հայաստանի կենտրոնական հրաբխային գոտու Արագածի բլոկի սահմաններում: Հանքավայրի շրջանում մերկացող ամենահին առաջացումները պլիոցենի հրաբխային ապարներն են, ներկայացված Ողջաբերդի (ստորին պլիոցեն) և Արագածի (վերին պլիոցեն) շերտախմբերով: Ողջաբերդի շերտախմբի ապարների ստորին ենթաշերտը ներկայացված է տուֆաբրեկչիաներով, տուֆակոնգլոմերատներով, որոնք հերթափոխվում են անդեզիտների, կավերի և

ավազների հետ: Կտրվածքով դեպի վեր տեղադրված են նույն շերտախմբի վերին ենթաշերտի լիպարիտները, ռիոլիտները, պեռլիտները և օբսիդիանները: Վերջիններս տարածված են Արտենի լեռան լանջերին:

Շրջանում բնական ջրային ցանցը թույլ է զարգացած ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության պատճառով: Այն հիմնականում ներկայացված է սելավային հոսքերի հեղեղատներով, որոնք ունեն սեզոնային բնույթ: Տեղամասից արևմուտք անցնում է Մաստարա սելավատարը: Սողանքային երևույթներ հայցվող տարածքներում չեն արձանագրվել: Ամենամոտ սողանքային մարմինը քարտեզագրվել է ավելի քան 24կմ հեռավորության վրա: Հայցվող տեղամասերի շրջանը սակավաջուր է: Հիմնական ջրագրական միավորը Սելավ Մաստարան գետն է: Սելավ-Մաստարան իրենից ներկայացնում է ժամանակավոր գործող հեղեղատային գետահուն: Սակավաջուր ժամանակահատվածում գետը գրեթե չորանում է:

Տարածքի հողային ծածկույթը ցածրադիր վայրերում ներկայացված է բացշագանակագույն և շագանակագույն, գորշ կիսաանապատային հողերով: Հայցվող տեղամասի հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն քարքարոտ քարածին-բեկորային հողերով: Հողի հնարավոր բերրի շերտը շատ փոքր է, առավելագույնը կազմում է 0.2մ: Հողի շերտի հետ խառնված են պեռլիտի և օբսիդիանի հրաբխային զանգվածը: Առանձին հատվաներում հրաբխային հաստվածքի ապարները մերկացած են: Հողերը քարքարոտ են, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր: Տարածքների խոտածածկում մասնակցող բույսերը վաղամեռ են:

«Բլեք» տեղամասը սահմանափակվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝

1942թ. համակարգ		ARM WGS-84 համակարգ	
1. x=4467758.84	y=8395404.47	1. x=4467751.84	y=8395302.47
2. x=4467868.00	y=8395383.00	2. x=4467861.00	y=8395281.00
3. x=4467968.11	y=8395493.96	3. x=4467961.11	y=8395391.96
4. x= 4467683.32	y=8395542.91	4. x=4467676.32	y=8395440.91

Հանքային հումքի որակը արդյունավետ մարմիններում փոփոխական է: Մեծ նշանակություն ունի նաև օբսիդիանների փխրունությունը, որը սահմանափակում է, երբեմն բացառում է լեռնային փորվածքների անցման ժամանակ պայթուցիկ նյութերի կիրառումը: Տեղամասում առկա մերկացած, մերձմակերևութային ոչ մեծ խորության շերտաձև մարմինների հետախուզումն իրականացվելու է ուղղաձիգ կարճամետրաժ հորատանցքերով և հետախուզաառուներով: Ընդ որում, օգտակար հանածոյի մարմինները հետախուզվելու են դրանց տարածմանը խաչաձև և միմյանց նկատմամբ զուգահեռ կողմնորոշված 3-ական հետախուզագծերի վրա դասավորված 2-ական հետախուզաառուներով և տրամադևված տարածքի անկյուններում և կենտրոնում հորատվելու են հորատանցքեր: Բոլոր հորատանցքերը ենթարկվելու են համատարած հանուկային նմուշարկման: Տեղամասում կձևավորվի հետախուզագծերի միջև մոտ 60մ, իսկ դրանց վրա հետախուզափորվածքների միջև մոտ 60-65մ հեռավորությամբ հետախուզական ցանց, ինչը թույլ կտա հետախուզված պաշարները, ըստ հետախուզվածության աստիճանի, գնահատել C1 կարգով:

Օգտակար հանածոյի զանգվածում կոնդիցիոն օբսիդիանի մենակտորների միջին ելքի որոշման, ինչպես նաև ըստ գեղազարդության դրա քանակական գնահատման նպատակով, հետախուզաառուների անցման ժամանակ վերցվելու են համախառն

նմուշներ՝ կատարվելու է օգտակար կուտակից արդյունահանված օբսիդիանի տեսակավորում և կշռում: Որոշվելու է նաև օբսիդիանի ծավալային զանգվածը բնամասում: Հանքայնացված գոտիների հզորությունը, ձգվածությունը, դրանց բնույթը և համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները և օբսիդիանների մարմինների մորֆոլոգիան պարզելու նպատակով նախատեսվում է հետախուզաառուների անցում: Առուների խորությունը նախատեսվում է ընդունել 1.5մ, լայնությունը՝ 0.8մ, իսկ երկարությունը մինչև 15մ: Հետախուզաառուների անցումը IV կարգի ամրության ապարներով նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքներով: «Բլեք» տեղամասի տարածքում նախատեսվում է անցնել 8 հետախուզաառուներ ընդհանուր 120գծ.մ. երկարությամբ, որոնց ամբողջ ծավալը կկազմի 144խմ:

«Բլեք» հետախուզվող տեղամասում հանքային գոտիները խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել 5 հորատանցք 20-ական մետր խորությամբ: Հորատման աշխատանքների ծավալը սույն ծրագրով կկազմի 100 գծ.մ: Հորատումը իրականացվելու է ժամանակակից պահանջների բավարարող հորատող հաստոցով՝ 93մմ և 76մմ տրամագծով ալմաստե թագիկներով: 5 անգամ կկատարվի ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Նախատեսվում է անցնել 1 բացահանք, ինչի նպատակն է կատարել համախառն նմուշարկում, վերցնելով 150խմ լեռնային զանգված: Համաձայն ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 47-րդ հոդվածի օգտակար հանածոյի հետազոտման արժեքի որոշման և փորձաքննություն անկցակցնելու նպատակով նախատեսվում է փորձնական հանույթ 100մ3 ծավալով:

Տեղամասի 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 2.5հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների տեղադրմամբ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքների ծավալներն են՝

- հորատահանուկի փաստագրում 100գծմ, մեկ հորատման հարթակի մակերեսը կազմում է 6մx8մ=48 քառ.մ.
- հետախուզաառուների փաստագրում 120-գծմ, հետախուզաառուների մակերեսը կազմում է 120x0,8=96քառ.մ.
- փորձնական բացհանքի մակերեսը կազմում է 20x2.5=50 քառ.մ.

Օբսիդիանների հետախուզական աշխատանքների ժամանակ շատ կարևոր է նմուշարկումը: Ծրագրով նախատեսվում է նմուշարկման հետևյալ տեսակները.

1. հորատահանուկային /սեկցիաների երկարությունը 6-7մ - 15 նմուշ,
2. մենակտորային /20x20x20սմ չափերի/ - 12 նմուշ,
3. համախառն /150 x150 x100մմ/ չափերի քար-հումքի տեսակավորման համար - 6 նմուշ:

Ապարների քիմիական և պետրոգրաֆիական կազմերն ուսումնասիրելու նպատակով կվերցվեն 2-ական նմուշներ: Նախատեսվում է կատարել հետևյալ լաբորատոր ուսումնասիրությունները.

1. Քիմիական անալիզներ՝ լեռնային ապարների լրիվ սիլիկատային անալիզ - 2 նմուշ
2. Պետրոգրաֆիական ուսումնասիրություններ՝ թափանցիկ շլիֆների պատրաստում և նկարագրում - 2 նմուշ
3. Ֆիզիկամեխանիկական փորձարկումներ - 27 նմուշ /15 հանուկային և 12 մենակտորային/:

Հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքավայրի ապարների զանգվածների առանձնահատկությունները, դրանց անիզոտրոպիան, ապարների կազմը, դրանց ճեղքավորվածությունը, ապարների կազմվածքային յուրահատկությունները և այլն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը. «ԲԼԵՔ ՍԹՈՈՒՆ ՕԲՍԻ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում դրսևորվելու են աննշան տեխնածին ճնշումներ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ. մեքենաների տեղաշարժի, հորատման աշխատանքների ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի և փոշու աննշան արտանետում: Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասերում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում չի ենթադրվում, քանի որ հայցվող տարածքում որևիցե ջրային մակերևութային հոսք և ստորգետնյա ջրերի հորիզոն ըստ գրական տվյալների չկա: Ընկերության կողմից ջրցանի համար անհրաժեշտ տեխնիկական և աշխատակազմի խմելու համար ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ մոտակա բնակավայրից:

Հողային ծածկույթ. Հողային ծածկույթի վրա աննշան, կարճատև բացասական ազդեցություն է դրսևորվելու հորատման հարթակների կառուցման, մակերևութային փորվածքների սցման և ճանամապարհի կառուցման ժամանակ:

Բուսական և կենդանական աշխարհ. աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ տեղամասերում չեն արձանագրվել: Բուսական բնական ծածկույթը խախտվելու է միայն հորատման հարթակների տարածքում, ազդեցությունը կրելու է կարճատև բնույթ: ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների ապրելավայրեր տեղամասերի շրջանում չկան: Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձանների տեղամասում չկա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ առաջանում են 4 տիպի թափոններ.

- Մակաբացման ապարներ (67.2խմ), որոնք ներկայացված են դելյուվիալ առաջացումներով և իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների, դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:
- Հորատման թագիկների թափոններ, որոնք առաջանում են հորատման ընթացքում թագագլխիկների կարծր համաձուլվածքային հատվածի մաշվելու արդյունքում: Հորատման թագիկների թափոնները իներտ մնացորդներ են: Հորատող

կազմակերպությունը աշխատանքների ավարտից հետո իր հետ կտեղափոխի առաջացած թափոնները՝ անպետք թագիկները:

- Ներքին այրման շարժիչների օգտագործված յուղերը վտանգավորության 3-րդ դասի են: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած նավթամթերքն ու քսայուղերը կտեղափոխվեն ընկերության բազա հետագա ուտիլիզացնան համար:

- Կենցաղային աղբի տեսակին են պատկանու թուղթը, տեքստիլը, պլաստմասսան, տարատեսակ փաթեթավորման պարագաները, հեղուկների պահպանման համար նախատեսված տարաները, ռետինը, պոլիմերները, լվացող ու մաքրող նյութերը, ներկերը և այլն աղբի տարաներով կտեղափոխվեն մոտակա աղբավայր:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների բնութագիրը. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման բացառում, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Արագածավան բնակավայրում, համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, որոնք տեղափոխվելու են մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

- Փոշենստեցման նպատակով ճանապարհի, հետախուզահորերի տարածքի և հորատման հարթակների ջրում: Ջուրը կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից:

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով: Համապատասպան պայմանագիր կկնքվի մասնագիտացված ծառայություն մատուցող ընկերության հետ ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո :

- Հորատման հարթակների և մակերևութային փորվածքների տարածքից հողաբուսական շերտի հանում 0.2մ հզորությամբ, կուտակում անմիջապես աշխատանքների հարակից հատվածում: Աշխատանքների ավարտից հետո անմիջապես իրականացվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով: Պահեստավորված շերտը վերադարձվելու է խախտված տարածք, հարթեցվելու է, փխրեցվելու է: Այնուհետև հողերում ցրվելու են օշինդրի սերմ, որը տարածքի բնութագրիչ բուսատեսակներից մեկն է: Վերականգնման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կազմում է (240մ2+96մ2+50մ2)=386քառմ: Վերականգնման ամբողջ ծավալը կկազմի՝ 386մ2X0.2մ=77.2խմ: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիայի գումարը կկազմի 46320 դրամ:

- Աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Աշխատանքների ժամանակ առաջանալու են աղմուկի և թրթռումների նոր աղբյուրներ՝ առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, այն գտնվելու է թույլատրելի սահմաններում:

Ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ. փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
- Հողային ծածկույթ. Հողերի քիմիական կազմը, հողերում նավթամթերքների պարունակությունը նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն ամսական մեկ անգամ
- Վայրի բնություն. կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում տարեկան մեկ անգամ

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ընկերությունը նախատեսում է մասնահանել 200.0հազ.դրամ գումար:

Պատճառաբանական եզրահանգումներ.

Ամփոփելով փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ հայտը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Համաձայն հայտի ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման: Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին մասնակցել են արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, մարզպետարանը: Օրենսդրությամբ սահմանված կարգով Թալին համայնքի Թաթուլ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ.

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Կատարել հայտով ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացման աշխատանքները, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Աշխատանքների կատարման ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես նաև մակերևույթային և լեռնային ապարների տեղաշարժի մոնիթորինգի արդյունքները և հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
4. Աշխատանքների կատարման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր,

անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը՝

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատիպ զուգարանում,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում, հողի բերրի շերտի պահեստավորում, ծածկում (հողաշերտով), աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով,

7. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

8. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել ՏԿԵ նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 01-Ն հրամանով սահմանված երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲԼԵՔ ՍԹՈՈՒՆ ՕԲՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին (Թաթուլ) համայնքի Արտենիի օբսիդիանների «Բլեք» տեղամասի 2.5հա մակերեսով տարածքում օբսիդիանի արդյունաբերական նշանակություն ունեցող պաշարների հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Կ. Հարությունյան